

Ապարան համայնքում ներկայացվել է «Քաղաքացիների ծայնն ու գործունեությունը Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի շրջանակներում իրականացվող «Քաղաքացու բյուջե» նախաձեռնությունը

Հայաստանում **Եվրամիության** դեսպան Պյոտր Սվիտալսկու և

ՀՀ Արագածոտնի մարզպետ **Դավիթ Գևորգյանի** մասնակցությամբ այսօր Ապարանի քաղաքային այգում տեղի ունեցած հանդիպման ընթացքում ներկայացվել է ԵՄ կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիների ծայնն ու գործունեությունը Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի շրջանակներում իրականացվող «Քաղաքացու բյուջե» նախաձեռնությունը:

Ծրագիրն իրականացվելու է խոշորացված համայնքներում՝ նպատակ ունենալով հզորացնել Հայաստանի խոշորացված համայնքների, ԵՄ-ի և տարածքային գործընկերների միջև կանոնավոր համագործակցությունը, բարձրացնել քաղաքացիների դերն ու մասնակցությունը խոշորացված համայնքների զարգացման գործընթացում՝ նախ և առաջ «Քաղաքացու բյուջե» նախաձեռնության միջոցով, մշակել համայնքային փորձնական ծրագրեր, մասնավորապես զբոսաշրջության և բացօթյա ժամանցի ոլորտում:

Հայաստանի խոշորացված բոլոր համայնքներում բնակիչները հնարավորություն կունենան համայնքային փոքր ծրագրերի համար գաղափարներ առաջարկել, քննարկել և ավելին իմանալ մասնակցային բյուջետավարման մասին: Նախաձեռնող խմբերի կողմից ներկայացված և հավանության արժանացած ծրագրերը կստանան մինչև 3000 եվրո ֆինանսավորում՝ գաղափարն իրագործելու համար:

Մարզպետ **Դավիթ Գևորգյանը** ողջույնի խոսքում ընդգծել է քաղաքացու դերը և գիտակցումը համայնքում առկա խնդիրների լուծման գործում. « Նախորդ տարի **Հայաստանում** տեղի ունեցած **թավշյա**, ոչ բռնի ժողովրդական հեղափոխությունից հետո քաղաքացու գիտակցության և ապրելակերպի մեջ տեղի են ունեցել փոփոխություններ, քաղաքացին իր համայնքում դարձել է ավելի պահանջատեր, էլ ավելի մտահոգ իր համայնքի ապագայով, համայնքի խնդիրների լուծմամբ, ինչը մեզ միայն ուրախացնում է: Մենք պետք է կարողանանք այնպես անել, որ կառավարություն-#ՏԻՄ - բնակիչ եռակողմ կապը լինի ավելի ամուր և ավելի արդյունավետ: Այդ համատեքստում շատ եմ կարևորում նմանատիպ ծրագրերի իրականացումը: Քաղաքացին նախ և առաջ պետք է պատկերացնի ինչպես լուծել խնդիրը, իմանա խնդրի լուծումը պետական որ օղակն է իրականացնելու, և գիտակցի, թե հենց ինքը՝ բնակիչը, ինչ կարող է անել խնդրի լուծման համար: Լիահույս եմ, որ մենք վաղը ունենալու ենք ավելի կայուն, հզոր և զարգացած համայնքներ:», -ասել է մարզպետը:

Արագածոտնի, Շիրակի և Կոտայքի մարզերից Ապարան ժամանած նախաձեռնող խմբերը ներկայացրել են իրենց գաղափարները, դրանց իրականացման վերաբերյալ իրենց պատկերացումները:

Միջոցառումը եզրափակվել է համայնքների շնորհալի սաների երգ ու պարի կատարումներով: